ՀՏԴ: 929:78(479.25)Ասատրյան+377(479.25)
DOI: 10.54503/2579-2830-2024.1(11)-294

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼՍԱՐԱՆ՝ ԵՐԵՎԱՆԻ ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋՈՒՄ

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջը 2023 թվականին նշեց իր հիմնադրման 100-ամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ տեղի ունեցան մի շարք միջոցառումներ: 2023 թ. սեպտեմբերի 27-28-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ համատեղ՝ Քոլեջի 100-ամյա պատմության ընթացքում 1-ին անգամ գումարվեց «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի դերն ու նշանակությունը հայ երաժշտարվեստում» խորագրով գիտաժողովը, որի նպատակն էր բացահայտել հայ երաժշտարվեստում Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի և նրա շրջանավարտների ունեցած դերն ու նշանակությունը և քննության առնել հայ ականավոր կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանի կյանքի, ստեղծագործական, կատարողական ու երաժշտական-հասարակական գործունեության ուսումնասիրության հարցերը:

Քոլեջի հոբելյանական կարևոր նախաձեռնություններից մեկն էլ կրթօջախի 51 լսարանների վերանորոգումն է, որոնք վերանորոգումից հետո անվանակոչվելու են Քոլեջի նախկին շրջանավարտների (ովքեր կարևոր հետք են թողել հայ երաժշտարվեստում) և վաստակաշատ դասատուների անուններով: 2023-ին լսարաններն անվանակոչվեցին դասատուներ՝ հայ երաժշտության անվանի գործիչներ և հմուտ մանկավարժներ Էդուարդ Բաղդասարյանի, Բորիս Սակկիլարիի, Գեորգի Մինասովի և Արմեն Բուդաղյանի, ինչպես նաև շրջանավարտներ՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստներ Ռաֆայել Մանգասարյանի, Լուսինե Զաքարյանի և Ռոբերտ Ամիրխանյանի, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչներ Արամ Սաթյանի, Լևոն Չաուշյանի և Կոնստանտին Պետրոսյանի անուններով:

2024 թվականի փետրվարի 5-ին Քոլեջի N 7 լսարանն անվանակոչվեց Քոլեջի նախկին սան (1984-1987, Լենինյան կրթաթոշակառու) և դասատու (1991-2003), ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Գրիգորի Ասատրյանի անունով: Աննա Ասատրյանը 2-րդ երաժշտագետն է, ում անունով լսարան է անվանակոչվել և առաջին երաժշտագետը, որը և՛ շրջանավարտ է, և՛ դասատու, և՛ սերտորեն կապված է հարազատ կրթօջախի հետ:

Հանդիսավոր միջոցառման ժամանակ բացման խոսքով հանդես եկավ Քոլեջի տնօրեն՝ այս գաղափարի հեղինակ, Վարազդատ Խաչումյանը:

Միջոցառմանը մասնակցում էին և շնորհավորական խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս Յուրի Սուվարյանը և Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը:

Հանդիսավոր միջոցառման ավարտին Համագործակցության հուշագիր կնքվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի միջև: Ի դեպ՝ այսօր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում աշխատող երաժշտագետներից 6-ը՝ այդ թվում արվեստագիտության 2 դոկտոր և 4 թեկնածու, քոլեջի տարբեր տարիների շրջանավարտներն են:

Աննա Ասատրյանն ի հիշատակ իր հոր՝ պետական գործիչ Գրիգոր Ասատրյանի, 2024 թ. սեպտեմբերից սահմանելու է Տիգրան Չուխաճյանի անվան կրթաթոշակ, որը կտրվի Քոլեջում բարձր առաջադիմությամբ սովորող՝ Էջմիածնի Մակար Եկմալյանի անվան երաժշտական դպրոցի նախկին շրջանավարտներից մեկին. դրա շնորհիվ տվյալ ուսանողը կկարողանա վճարել իր ուսման վարձը:

Իսկ մինչ այդ՝ վերանորոգված լսարանին Աննա Ասատրյանը նվիրեց չեխական «Rösler» մակնիշի դաշնամուր:

Մարգարիտա ՔԱՄԱԼՅԱՆ
արվեստագիտության թեկնածու
(ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթ, փետրվար, 2024, էջ 2)